

«ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 05.06.2012թ-ի նիստում քննության է առնվել «Հանքավան Սփրինգս» ՍՊԸ սնանկության գործերով կառավարչի 29.05.2012թ. թիվ 274 առարկությունը (գանգատը) «ԿԱ ՊԵԿ ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության 25.05.2012թ. թիվ 1206928 արձանագրության դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերագրյալ արձանագրությունը թողնվել է անփոփոխ:

Համաձայն «ԿԱ ՊԵԿ նախագահի 11.05.2012թ. թիվ 1206928 հանձնարարագրի, «Հանքավան Սփրինգս» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի, պարտադիր սոցիալական ապահովության վճարների՝ օրենքով սահմանված կարգով հաշվարկված պարտավորություններից ավելի վճարված գումարների և ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից առաջացած դեբետային մնացորդի ուսումնասիրություն, որն ընդգրկել է 2004թ. հունվար ամսից մինչև 2012թ-ի մարտ ամիսն ընկած ժամանակաշրջանը: Արդյունքում 25.05.2012թ-ին կազմվել է թիվ 1206928 արձանագրությունը (այսուհետ նաև արձանագրություն), որով մասնավորապես արձանագրվել է հետևյալը:

«ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից 2012թ. մայիսի 11-ին հրապարակված թիվ 1206928 հանձնարարագրի համաձայն՝ «Հանքավան Սփրինգս» ՍՊԸ-ում իրականացվել է գերավճարի և ԱԱՀ-ի դեբետային մնացորդի ուսումնասիրություն 01.01.2004թ-ից մինչև 31.03.2012թ. ընկած ժամանակաշրջանի համար: Համաձայն Շենգավիթի ՀՏ կողմից տրամադրված մնացորդների վերաբերյալ տեղեկանքի, ընկերության ԱԱՀ-ի դեբետային մնացորդն 01.04.2012թ-ի դրությամբ կազմում է 11.790.000 դրամ, շահութահարկի մնացորդը՝ 980.500 դրամ, եկամտահարկի մնացորդը՝ 1.616.597 դրամ, պարտադիր սոցիալական ապահովության վճարի մնացորդը՝ 3.384.747 դրամ:

Ներկայացված սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվեց, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում ընկերությունը հաշվառման վայրի ՀՏ չի ներկայացրել 2006թ-ի և հետագա հաշվետու ժամանակաշրջանների շահութահարկի հաշվարկները, 2006թ. մայիս, հունիս ամիսների, 2007թ. հաշվետու ժամանակաշրջանների, 2008թ. առաջին, երկրորդ, չորրորդ եռամսյակների և հետագա հաշվետու ժամանակաշրջանների ԱԱՀ-ի հաշվարկները, 2006թ-ի երկրորդ, եռամսյակի, 2007թ-ի և հետագա հաշվետու ժամանակաշրջանների եկամտահարկի հաշվարկները, 2006թ-ի մայիս, հունիս, օգոստոս ամիսների, 2007թ-ի օգոստոս ամսվա և հետագա հաշվետու ժամանակաշրջանների պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվարկները: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում ընկերությունը չի ներկայացրել «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքին հավելված 1-ի 16-րդ կետի ա) ենթակետով պահանջվող «Բացթողումը թույլատրված է» և «Բեռը ստացված է» նշագրումներով մաքսային հայտարարագրերի առկայության մասին տեղեկանքը:

Այսպիսով, հաշվի առնելով «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքին հավելված 1-ի 17-րդ և 25-րդ կետերի, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի հավելված 1-ի 11.1 կետի պահանջները, վերը նշված ԱԱՀ-ի դեբետային մնացորդի, շահութահարկի, եկամտահարկի, պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով գերավճարի գումարները ենթակա չեն այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման:

«Հանքավան Սփրինգս» ՍՊԸ սնանկության գործերով կառավարչի գանգատում մասնավորապես նշված է.

1. Արձանագրությունում նշված ուսումնասիրվող ժամանակաշրջանում չեն ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ.

«Տնտեսական դատարանի 02.05.2006թ. վճռով «Հանքավան Սփրինգս» ՍՊԸ-ն ճանաչվել է սնանկ, նույն դատարանի 09.10.2006թ որոշմամբ ընկերության գործունեությունը կասեցվել է, և նրա նկատմամբ սկսվել է լուծարման գործընթաց:

«Սնանկության մասին» «Օրենքի 39-րդ հոդվածի 5-րդ կետի ա/ ենթակետով սահմանված է պարտապանի գործունեության կասեցման պահից վերջինիս անունից կառավարիչը ներկայացնում է տեղեկատվություն հարկային և այլ պարտադիր վճարների գծով սնանկության վարույթի ընթացքում լրացուցիչ առաջացած պարտավորությունների վերաբերյալ:

Տվյալ դեպքում սկսած 09.10.2006 թվականից /պարտապանի գործունեության կասեցման պահից/ կառավարչի կողմից յուրաքանչյուր լրացուցիչ առաջացած պարտավորության վերաբերյալ ներկայացվել է համապատասխան տեղեկատվություն /միջանկյալ բաշխման ծրագրերի տեսքով/ և կատարվել են համապատասխան վճարումները: Հետևաբար արձանագրությունում նշված այն միտքը, որ պարտապանի կողմից համապատասխան հաշվարկներ չեն ներկայացվել, չի համապատասխանում իրականությանը և այդ հիմքով գերավճարների վերադարձումը մերժելը համարում են չիմնավորված:

2. Արձանագրությունում նշված համաձայն Շենգավիթի «Տ կողմից տրամադրված մնացորդների վերաբերյալ:

Ընդհանրապես անհասկանալի է արձանագրությունում նշված Շենգավիթի «Տ կողմից տրամադրված դեբետային մնացորդների չափերը և նրանց առաջացման հիմքերը:

Հաշվի առնելով վերոշարադրյալը ես մնում եմ այն կարծիքին, որ իրականում առկա են գերավճարներ որոնք ենթակա են վերադարձման:

«ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության սնանկության գործով կառավարչի և ուսումնասիրությունն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստրկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

«Հարկերի մասին» «Օրենքի հավելված 1-ի 11.1-րդ կետի համաձայն. «Գերավճարը կամ գերավճարից տարբերվող գումարը հարկ վճարողին վերադարձվում է հարկային մարմնի միջոցով պետական բյուջե հավաքագրվող հարկային և սոցիալական վճարների մասով բոլոր պարտավորություններն օրենքով սահմանված կարգով հաշվանցելուց հետո: Ընդ որում, եթե գումարը վերադարձնելու վերաբերյալ դիմում ներկայացնելու պահին ավարտվել է հերթական հաշվետու ժամանակաշրջանը, սակայն հարկ վճարողի կողմից չեն ներկայացվել (հարկային մարմինը չի ստացել) տվյալ հաշվետու ժամանակաշրջանում հարկերի (հաստատագրված վճարների) և սոցիալական վճարների հաշվարկման համար հիմք հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվարկները, հաշվետվությունները, հայտարարագրերը, ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների, հաստատագրված վճարների հաշվարկման սահմանային չափերի վերաբերյալ հայտարարություններն ու տեղեկությունները, կամ եթե լրացել է նոր վճարում կատարելու ժամկետը, ապա գումարների վերադարձն իրականացվում է նոր պարտավորությունների մեծությունները որոշելուց (մասնավորապես՝ ներկայացվող հաշվարկների, հաշվետվությունների, հայտարարագրերի, տեղեկությունների հիման վրա) և նոր ծագած պարտավորությունները մարելուց հետո»:

Իր հերթին «Ավելացված արժեքի հարկի մասին» «Օրենքի հավելված 1-ով սահմանված «Ավելացված արժեքի հարկի հաշվին հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարների մեծության որոշման կարգ»-ի (այսուհետ նաև Կարգ) 16-րդ կետի համաձայն. «ԱԱՀ-ի դեբետային մնացորդի հաշվին հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարն արձանագրելու համար հարկ վճարողը համապատասխան հարկային մարմին (ուսումնասիրություն կամ ստուգում իրականացնող անձանց) է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

ա) «Արտահանում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ապրանքների արտահանման գործարքների մասով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի կողմից հարկ վճարողին տրված տեղեկանքը՝

Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով լրացված՝ <Բացթողումը թույլատրված է> և <Բեռը ստացված է> նշումներով մաքսային հայտարարագրի առկայության մասին>:

Կարգի 17-րդ կետի համաձայն. <Սույն կարգի 16-րդ կետում նշված փաստաթղթերը ներկայացվում են հարկային մարմնի կողմից անցկացվող ուսումնասիրության կամ ստուգման ընթացքում, սակայն ոչ ուշ, քան հարկային մարմնի կողմից ուսումնասիրությունը կամ ստուգումը սկսելուն հաջորդող 5-րդ օրը, բացառությամբ այն դեպքի, երբ նշված կետով սահմանվել է փաստաթղթի ներկայացման այլ ժամկետ: Նշված ժամկետում փաստաթղթերի չներկայացումը հիմք է սույն կարգի 24-րդ կետի համաձայն ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման և ուսումնասիրության համար սույն կարգով սահմանված ժամկետների ընթացքը կասեցնելու կամ չներկայացված փաստաթղթերին վերաբերող՝ ԱԱՀ-ի գումարների հաշվին այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցումը և (կամ) այդ գումարների հետվերադարձը սույն կարգի 25-րդ կետի համաձայն մերժելու համար>:

Քննարկվող դեպքում ընկերության (այլ ոչ թե սնանկության գործերով կառավարչի) կողմից չեն ներկայացվել ուսումնասիրվող ժամանակաշրջանին վերաբերող ԱԱՀ-ի, շահութահարկի, եկամտահարկի և սոցիալական ապահովության վճերների համապատասխան հաշվարկներն ու հաշվետվությունները, ինչպես նաև <Բացթողումը թույլատրված է> և <Բեռը ստացված է> նշագրումներով մաքսային հայտարարագրերի առկայության մասին տեղեկանքը: Հետևապես ղեկավարվելով <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքի հավելված 1-ի 17-րդ և 25-րդ կետերի, <Հարկերի մասին> ՀՀ օրենքի հավելված 1-ի 11.1 կետի պահանջներով, ԱԱՀ-ի դեբետային մնացորդի, շահութահարկի, եկամտահարկի, պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով գերավճարի գումարները ենթակա չեն այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Արձանագրությունը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ